ՆՈՐ-ԴԱՐ

№ 91 ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 26 Մայիսի 1895 Ուրբաթ 26 Մայիսի ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 91

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կ. բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների գինն 2 կ., բնկերների համար կրկնատոկ:

Յունիսի 1-ից բաժանորդ են գրւում «Նոր-Դար»-ին եւ վճարում են 6 ր. 75 կ.:

—

Թերթիս վարչութիւնը խընդրում է նրանցից, որոնց վրայ մինչեւ օրս ապառիկ է մնում, բարեհաճեն ուղարկել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց գործերը:
Գերմանական քաղաքականութիւնը և հայերը Թիւրքիայում:
Վեհափառ Հայրապետի մեկնումը Նոր-Նախիջեւանից:
Քրոնիկոն. — Կայսերական տօն: Վեհ. Հայրապետի Պետերբուրգ ժամանելը: Վեհ. Կաթողիկոսի ուղեւորութիւնը: Նոր-Նախիջեւանից: Պր. Լէյդէն: Քաղաքային կանոնադրութիւն: Նոր գալոցներ: Նոր թերթ: Տուրիստ: Սիզորով: Հայ երգիչներ: Մեծ-Ղարաքիլիսայից:
Գալոցների կարիքն Ախալքալաքի գաւառում:
Մեր գինեգործութեան արդի վիճակը:
Քաղաքական. — Թիւրքիա: Չինաստան: Գերմանիա: Քաղաքական լուրեր:
Խառն լուրեր:
Հեռագրներ:
Բանասիրական. — Հայոց խընդիրն և Օսման-բէյը:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

ՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԸ:

—

Լոնդոնից, մայիսի 19 (31) թուով հեռագրում են երեք տէրութիւնների ներկայացուցիչների Մուշում թուրք կառավարութեան կողմից կրած անարգանքների հետեւեալ մանրամասնութիւնը.

«Մուշից հեռագրում են Կ. Պոլիս, որ երեք տէրութիւնների պատուիրակներին այնտեղ թուրք ոստիկանութիւնը ամենակոպիտ վերաբերմունքների է հասցրել. ոստիկանները ներս են խուժել պատուիրակների բնակարանն և կամեցել են ձերբակալել նրանց ծառաներից մինին, միևնոյն ժամանակ փողոցային հայհոյանքներ թափելով, և հազիւ կարողացել են դուրս ձգել նրանց կառապանների միջոցով: Այդ միևնոյն դէպքի առթիւ թուրք ժողովուրդն և ոստիկանութիւնը ամեն տեսակ վիրաւորանքներ հասցրել է թէ պատուիրակների ըսպասաւորներին և թէ նրանց հետ յարաբերութիւն ունեցող տեղացի հայերին»:

—

Ամենքից հաղորդում են, որ այս օրերս այնտեղ ձերբակալել են երկու հայ լրագրողներ Ամենքում լոյս տեսնող «Վաթան» թուրք թերթում սուլթանի դէմ վիրաւորական յօդուած հրատարակած լինելու պատճառով:

—

Տեղւոյս ռուս թերթերին մայիսի 24-ից, Պետերբուրգից հեռագրում է հետեւեալը.

«Կ. Պոլսից ստացուած հեռագիրը հաւաստում է, թէ Ֆ. Դուբը մերժել է տէրութիւնների կողմից Հայաստանում՝ իւրաքանչիւր կառավարութեան վրայ նշանակուելիք վերահսկողութիւնը (կոնտրոլ)»:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

—

Միւնխենի «Allg. Zeitung»-ը, որ հրատարակում է Գերմանիայի ամենանշանաւոր քաղաքական լուրջ թերթն է համարւում, հայոց խնդրում ոչ մի բառով յօդուտ հայերի չի խօսում: Ընդհակառակը, Թրքական չահերի պաշտպան հանդիսանալով, այդ թերթն իւր Օսման-բէյերի բերանով ամեն հնար գործ է դնում Թիւրքիան մի բարեկարգ պետութիւն հրատարակելու, ուր հայերն իբր թէ գանգատուելու ամենեին տեղիք չունին:

Հայ ընթերցողն անշուշտ զարմանում է, թէ ինչու Գերմանիայի մամուլն առհասարակ կամ լռում է այս րոպէիս քաղաքական աշխարհը յուզող հայ խնդրի մասին, կամ եթէ խօսում է, խօսում է

Սասունը օրուայ խնդրի հանգոյցն է: Մենք համաձայն ենք Օսման-բէյի այն մտքի հետ, թէ գոռում գոչիւնով, յօդում ու վրդովմամբ որ և է խնդիր չի լուծուիլ, Անվրդով կերպով խնդրի մէջ մտնելն և սառնարիւն դատողութիւնը ամեն մի կնճռոտ խնդիր յաջողութեամբ լուծելու ամենալաւ պայմանն է:

Չնայելով որ հարցը մեր եղբայրների և քոյրերի գոյութեան ապահովութեան մասին է, նրանց կեանքի և մահու խընդիրն է, այնուամենայնիւ մենք հենց այդքան սառնարիւն կերպով մտանք այդ խնդրի մէջ և նոյնքան անվրդով և զանակով դրեցինք մեր սոյն յօդուածը:

Ցանկալի էր, որ մեր ընթերցողներն ևս նոյնքան պաղարիւն դատողութեամբ կարդային ոչ թէ այս, այլև այն բոլորը, ինչ որ կրզրուի սոյն՝ մեզ համար այնքան ծանրակշիռ հարցի մասին:

Դրանով ընթերցողն աւելի չուտ կըհասնի որոշ եզրակացութեան և կարող կըլինի դիւրաւ ըմբռնելու այն բոլոր մանաւոր կամ ընդհանուր դիւանագիտական խաղերի միտքը, որ անդադար

Գերմանական քաղաքականութիւնը և հայերը Թիւրքիայում:
Բանասիրական. — Հայոց խընդիրն և Օսման-բէյը:

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐՆ ԵՒ ՕՍՄԱՆ-ԲԷՅԸ *)

—

(«Նոր-Դար»-ի Կ. Պոլսի թղթակցից):

—

Ը.

Օսման-բէյը իւր յօդուածը վերջացնում է Սասունի կոտորածներով:

Նոյնը պիտի անենք և՛ մենք:

Ուրիշ կերպ էլ կարելի չէ: Իրաւ, հայկական խնդիրը նոր չէ, կոտորածները խօ Թիւրքիայի այդ երկրին սիրատևական տարիների չափ հին են, բայց և այնպէս այդ հին, դիպլոմատիայի ձեռքում զէնք ու խաղալիկ դարձած խընդիրը յարուցուել է այսօր Սասունի կոտորածների պատճառով:

Ուրիմն որտեղից էլ որ սկսենք, դատողութիւնների և եզրակացութիւնների ինչպիսի խոտորնակի և հեռաւոր թելերով էլ անցնենք,—պարտական կանգ պիտի առնենք Սասունի վրայ:

*) Տես «Նոր-Դար» № 90.

Հայոց գործերը:
Գերմանական քաղաքականութիւնը և հայերը Թիւրքիայում:
Վեհափառ Հայրապետի մեկնումը Նոր-Նախիջեւանից:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

(«Նոր-Դար»-ին Նոր-Նախիջեւանից)

—

Այսօր, մայիսի 22-ին, երկուշաբթի առաւօտեան վաղ արտասովոր չարժում էր նկատւում Նոր-Նախիջեւանում: Ժողովուրդն առաջուց տեղեակ լինելով, որ Վեհափառ Կաթողիկոսը պիտի մեկնէ Պետերբուրգ, խումբ-խումբ քաղաքի ամեն ծայրերից դիմում էր դէպի ս. Լուսաւորիչ եկեղեցու բակը, Վեհափառի բնակած տան փողոցն և երկաթուղու կայարանը: Ամեն մարդ չտասում էր Վեհափառի վերջին օրհնութիւնը ստանալ և բարի ճամբայ մաղթել Նրան:

Ո՛չ...

Որեմն այստեղ թափուած արիւնը պատերազմի կամ մենամարտի մէջ թափուած արեան հետ համեմատել կարելի չէ:

Սկզբունքով սիրտ չունեցող դիպլոմատիան հենց նրա համար է դրգռուում, նրա համար է Սասունի զոհերի վրայ սիրտ պատռելու չափ ոլբում, որ զինուած քիւրդերն և օսմանեան զինուած զօրքերը կոտորել են բոլորովին անզէն ժողովրդին, կոտորել են հազարաւոր անզէն ու անմեղ կանանց, անզէն, անմեղ և անվնաս երեխաների:

Եթէ՝ դիցուք մի զինուած մարդ գաղտագողի յարձակուէր մի ուրիշ անզէն և միամիտ նստած մարդու վրայ և սպաներ նրան,—դա մենամարտութիւն չէր լինիլ, այլ բացարձակ սպրդործութիւն, որն և ոչ մի օրէնքով կարող է արդարանալ.

Եւ եթէ այսօր մարդկային հասարակութեան խիղճը դատում ու դատափետում է Թիւրքիայի այդ արարքը,—այդ նրա համար է, որ նա Սասունի դէմ

Գերմանական քաղաքականութիւնը և հայերը Թիւրքիայում:

ԱՅԱՍՏԵՂ ՆԱ ՄԵՐԿԱՑՆՈՒՄ Է ԱՅՆ, ԻՆՉ...

—

Այստեղ նա մերկացնում է այն, ինչ որ սուր մարդկային է, և երեան է գալիս իւր հոդու ու մարքի ամբողջ այլանդակութեամբ, իւր վայրենի գազանային անզուսպ բնազդներով ու հակումներով:

Իրաւ, կռիւը, պատերազմը մենամարտութեան նման մի բան է, կամ ազգամարտութիւն է, բայց դա Սասունի կռուի մասին չէ ասուած:

Մենամարտողները, ինչից էլ որ առաջացած լինի մենամարտութեան անհրաժեշտութիւնը, զինուած են լինում միատեսակ զէնքերով. մենամարտութեան հրաւիրողը զէնքի ընտրութիւնը թողնում է միւսին, իսկ վկաները քննում են, թէ արդեօք միատեսակ են այդ զէնքերը, մի չափով վատօդ կամ զընդակ է գրուած, միատեսակ սուր են...

Այժմ հարցնում ենք. քիւրդերը կամ կառավարութիւնը հրաւէր կարդացին սասունցիներին կռուելու, նրանց ձեռքը տուին սուր, հրացան, թնդանօթ և այլն, և վկաները քննեցին...

Գերմանական քաղաքականութիւնը և հայերը Թիւրքիայում:

ցանկութեան համեմատ (օրինակ, Թիւրքիայում ապրող գերմանացիք իրենց զինուորական ծառայութիւնը պիտի կատարեն իրենց հայրենիքում. նրանք թուրքահպատակ չեն համարւում), ուստի սուլթանի երկրում նրանք կատարեալ ազատութիւն ունեին իրենց ազդեցութիւնը գործ դնելու. և գործ են դնում. օրինակ, Թրքական բոլոր երկաթուղիները գերմանացիների ձեռքին են: Գերմանացիներն այդպիսով կարողացել են Թիւրքիայի հետ այնպիսի յարաբերութեան մէջ մտնել, որի վերջնական նպատակն է՝ գէթ առայժմ՝ տնտեսապէս միայն տիրանալ այդ երկրին: Եւ քանի որ հայերը, ինչպէս տեսանք վերեւում, նոյն իսկ գերմանացիների կարծիքով, զօրեղ ախոյեան են հանդիսանում Թիւրքիան գէթ տնտեսապէս գերմանացիների լիակատար ազդեցութեան ենթարկուելու գործում, ուրեմն, կարծում ենք, այլ ևս զարմանալի չպիտի լինի, որ Գերմանիան այսպիսի մի աննպաստ դիրք է բռնել այժմ հայոց խնդրի մէջ, որի բարեյաջող լուծումն երևի նա կարծում է, թէ իւր քաղաքականութեան աննպաստ պիտի լինի:

Բայց որքան սխալւում է նա...

Եւ եթէ Գերմանիան իմանար իւր սխալը, ամենից առաջ նա պիտի հանդէս գար ամենայն եռանդով պաշտպանելու հայոց դատը...

Sartag.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒՄԸ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

(«Նոր-Դար»-ին Նոր-Նախիջեւանից)

—

Այսօր, մայիսի 22-ին, երկուշաբթի առաւօտեան վաղ արտասովոր չարժում էր նկատւում Նոր-Նախիջեւանում: Ժողովուրդն առաջուց տեղեակ լինելով, որ Վեհափառ Կաթողիկոսը պիտի մեկնէ Պետերբուրգ, խումբ-խումբ քաղաքի ամեն ծայրերից դիմում էր դէպի ս. Լուսաւորիչ եկեղեցու բակը, Վեհափառի բնակած տան փողոցն և երկաթուղու կայարանը: Ամեն մարդ չտասում էր Վեհափառի վերջին օրհնութիւնը ստանալ և բարի ճամբայ մաղթել Նրան:

Ո՛չ...

Որեմն այստեղ թափուած արիւնը պատերազմի կամ մենամարտի մէջ թափուած արեան հետ համեմատել կարելի չէ:

Սկզբունքով սիրտ չունեցող դիպլոմատիան հենց նրա համար է դրգռուում, նրա համար է Սասունի զոհերի վրայ սիրտ պատռելու չափ ոլբում, որ զինուած քիւրդերն և օսմանեան զինուած զօրքերը կոտորել են բոլորովին անզէն ժողովրդին, կոտորել են հազարաւոր անզէն ու անմեղ կանանց, անզէն, անմեղ և անվնաս երեխաների:

Եթէ՝ դիցուք մի զինուած մարդ գաղտագողի յարձակուէր մի ուրիշ անզէն և միամիտ նստած մարդու վրայ և սպաներ նրան,—դա մենամարտութիւն չէր լինիլ, այլ բացարձակ սպրդործութիւն, որն և ոչ մի օրէնքով կարող է արդարանալ.

Եւ եթէ այսօր մարդկային հասարակութեան խիղճը դատում ու դատափետում է Թիւրքիայի այդ արարքը,—այդ նրա համար է, որ նա Սասունի դէմ

Կրասիլնիկեանի տան առաջ ահագին բազմութիւն էր հաւաքուած. սպասում էին Վեհափառի դուրս գալուն։ Դրան մօտ կանգնած էին Կրասիլնիկեան երեխաները ծաղիկների փնջեր ձեռքներին։ Երբ Հայրիկը յայտնուեցաւ դրան մէջ, այդ փոքրիկ մանուկները սկսեցին ծաղիկներ ցանել Նրա ոտների առաջ։ Հազարաւոր բերաններ «կեցցէ Հայրիկ» էին աղաղակում։ Վեհափառն համբոյր նատել տուց ձի լծած կառքի մէջ և ժողովրդի ցնծագին աղաղակների ուղեկցութեամբ դիմեց դէպի ս. Լուսաւորիչ եկեղեցին։ Այստեղ արդէն չարժուել անհնարին էր—այնքան չատ բազմութիւն կար։ Եկեղեցում հինգ րոպէի չափ աղօթելուց և ժողովուրդին օրհնելուց յետոյ, Վեհափառը դուրս եկաւ և նոյն տեղ ձի լծած կառքով ուղևորուեց դէպի Ռոստովի երկաթուղու կայարանը։ Ամբողջ ճանապարհի վրայ չարէ չար ահագին բազմութիւն էր կանգնած, որ որոտընդոստ կեցցէներով ճանապարհում էր իւր սիրելի Պետին։ Նորին Վեհափառութիւնը կառքի մէջ նստած՝ խաչակնքում էր աջ ու ձախ։ Հայրապետական կառքին չրջապատած արշաւում էին երիտասարդներ սպիտակ չերքեզնակ հագուստով և նոյն գոյնի մորթէ գլխարկներով. կառքի առաջից գնում էին երկու հեծեալ քահանայ, տանելով կաթողիկոսական խաչն և գաւազանը. հաճից գնում էին բազմաթիւ կառքեր։

Ռոստովի կայարանի առաջ, փողոցի երկու կողմը և կայարանում աւելի չատ ժողովուրդ կար, որ Վեհափառին ընդունեց ցնծագին աղաղակներով։ Կայարանում պատրաստ կանգնած էր Մոսկուայի հայ հասարակութեան կողմից յատկապէս Նորին Վեհափառութեան համար պատրաստած արտակարգ գնացքը։ Այդտեղ էին և նոյն Մոսկուայի հայ հասարակութեան կողմից եկած պատգամաւորները՝ պ. պ. Ս. Մամիկոնեան և Էքիզները։ Ալքայական սենեակներից մինչև Վեհափառի համար յատկացուած վագոնը գորգ էր փռուած, որի վրայ էլ ծաղիկներ էին ցանուած։ Ծաղիկներով էր ծածկուած նմանապէս վագոնի յատակը։ Արքայական սենեակներից անցնելով, Նորին Վեհափառութիւնը հաճեց մտնել Իւր վագոնը։ Ռոստովի քաղաքագլուխը վագոնում ներկայացաւ Վեհ. Հայրապետին Նրան բարի երթ մաղթելու համար, և համբուրեց Նրա աջը։

Ժամը 12-ին արտակարգ գնացքը չարժուեց, Նոր-Նախիջևանից դէպի Պետերբուրգ տանելով ամենայն հայոց Վեհ. Կաթողիկոսին Իւր ուղեկիցներով։ Ժողովուրդը որոտընդոստ կեցցէներով ճանապարհ դրեց իւր պաշտելի Հայրիկին։ Շատ տղամարդիկ և կանայք ուղեկցեցին մինչև Նովո-Չերկասկ։

Նոր-Նախիջևանի կայարանի առաջ գնացքը կանգ առաւ 5 րոպէ։ Այստեղ, պլատֆորմի վրայ, կանգնած էին ուսուցնարանների աչակերտուհիներն ու աչակերտները իրենց ուսուցիչներով և ահագին բազմութիւն, որ օդը թնդացնում էր անվերջ կեցցէներով։ Վեհափառը մօտեցաւ լուսամուտին, օրհնեց և ասաց, որ երբէք մոռանալու չէ Նոր-Նախիջևանը։ Աչակերտներն երգեցին, գնացքը կամաց չարժուեցաւ, ուրտնդոստ կեցցէները չարունակւում էին...

Երջանիկ էր Նոր Նախիջևանի հայ ժողովուրդը, որ երեք ամիս վայելեց հայոց Հայրապետի քաղցր տեսութիւնը, օրհնութիւնը, և լսում էր Նրա քարոզները։ Գալու օրից մինչև մեկնելու օրը Նոր-Նախիջևանի համար ազգային մի մեծ տօն էր. ժողովուրդը չարունակ ցնծութեան և ոգևորութեան մէջ էր, ամենքի աչքերը յառած էին դէպի վեհարանը. ամենքն երջանիկ էին այն գիտակցութիւնից, թէ Հայրիկն իրենց մօտ է։

Ե. Շ.

ՔՐՈՆԻԿՈՆ

Հինգշաբթի, մայիսի 25-ին, Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդորովնայի ծննդեան օրը Թիֆլիսի բոլոր դաւանութիւններին եկեղեցիներում հանդիսաւոր գոհաբանական մաղթանքներ կատարուեցան։ Քաղաքն առաւօտուանից զարդարուած էր դրօշակներով, իսկ երեկոյեան՝ լուսաւառութիւն կար։

—

«Նուս. հեռ. գործ.»-ը Պետերբուրգից, մայիսի 25-ից հեռագրում է մեզ. Այսօր Պետերբուրգ է ժամանում հայոց Կաթողիկոսը։

—

Պետերբուրգից, մայիսի 24-ից տեղական ռուս թերթերին հեռագրում են, որ Վեհափառ Հայրապետին դիմաւորելու համար պատգամաւորութիւն է գընացել Մոսկուայի և Պետերբուրգի հայերի կողմից։ Մոսկուայում Նորին Վեհափառութիւնը պիտի մնար երեք ժամ միայն։ Պետերբուրգում Նրա համար բնակարան է յատկացուած Միլլիոնայա փողոցում։

—

Նոր-Նախիջևանից.— Մեր քաղաքի հասարակութեան կողմից մի չնորհակալութեան ուղերձ մատուցին սիկին և պարոն Կրասիլնիկեաններին, որ երեք ամիս ամենայն սիրով և ուրախութեամբ ազդիս Վեհ. Հայրապետին հիւրասիրեցին։ Տիկին Կրասիլնիկեանին Վեհափառ Հայրապետը մի մատանի է ընծայել։

Փառք ու պատիւ թէ տիկինոջ և թէ պ. Կրասիլնիկեաններին։

—

«Նուս. հեռ. գործ.»-ը Բերլինից, մայիսի 23-ից հեռագրում է, որ պրոֆեսսոր Լէյդենը Բաթում է ուղևորւում։

—

Սկզբունքով վճռուած է 1892 թ. յունիսի 11-ի Բարձրագոյն հաստատուած քաղաքային կանոնադրութիւնը մտցնել Անդրկովկասի և Սուրբ-ոզոլի նահանգի այն քաղաքներում, ուր չէր մտցուած 1870 թ. յունիսի 16-ի կանոնադրութիւնը։

—

Կովկասի ուսումնարանական չրջանի հոգաբարձուն լուսաւորութեան մինիստրութեան մի առաջադրութիւն է արել տարրական դպրոցներ բանալու Սոչի աւանում (Սև ծովի չրջան) և Թիֆլիսի նահանգի Գոմբոր, Շուլաւէր, Ջալալ-Օղլի, Ալի և Մալկա գիւղերում։

—

Թոյլ է տրուած էսէնտուքում ռուսերէն մի չաբաթաթերթ հրատարակելու «Մինեռալնիա վոդի» (Հանքային ջրեր) անունով։

—

Ահա միքանի օր է, որ Թիֆլիսումն էր ռուս երիտասարդ հանապարհորդ-տուրիստ Վաս. Միխ. Սիդորով։ Նա այժմ ուսումնասիրում է Կովկասը, որի մասին մի չարադրութիւն է պատրաստում։ Պարոն Սիդորովը արդէն ունի հրատարակած իւր հանապարհորդական տպաւորութիւնները Ամերիկայի Գերմանիայի, Վոլգայի մասին և այլն։ Ալէքսանդրապոլ, Երևան, ս. Էջմիածին այցելելուց յետոյ, նա այժմ մեկնեց դէպի Սղնախ, Շուշի։ Ցաւով ենք, որ Կովկասի բնակիչները պէտք եղած տեղը չեն զանել աչակցութիւն ցոյց տալու նրան իւր ուսումնասիրութիւնների ժամանակ։

—

Իտալիայի Թերթերը չարունակում են համակրանքով խօսել տէնոր Կոստանդեանի, նոյնպէս օր. Խոջայանցի և պ. Ամիրջանեանի մասին։ Անցեալները նրանք մեծ յաջողութիւն են ունեցել Սամպիերդարինա քաղաքում (Ջենովայի մօտ)։ Ջենովայի լրագրները մանաւանդ չեչտում են Կոստանդեանի նուրբ ճաչակի և չքօլայի վրայ։ Նրա ռոմանսի do-ն բոլորին հիացրել է։ Լրագրների այս գովասանքները մենք ուրախութեամբ արձանագրում ենք իրենց ազգակից հայ երգչի տաղանդի։

—

ՄԵՆԴ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՑԻՑ. — Մայիսի 1-ին եկաւ մեր գիւղը Ալէքսանդրապոլի գաւառապետը։ Համալի գիւղը հասած ժամանակ, ներկայանում են մինչև չիմայ անյայտացած չափարի ազգականները և խնդրում են մի ճար անել։ Հետևեալ օրը գաւառապետը գնաց Սարով գիւղը, ժողովեց թուրքերին չուրջը և խիստ սպառնալիքներ կարդալով, հրամայեց չորս օրուայ ընթացքում կամ գտնել չափար Արամի գիակը, ձին և հրացանը, կամ աւազակներին բռնել ու յանձնել ստիկանութեան ձեռքը, կամ եթէ չեն կարող բռնել՝ սպանեն, և կամ յայտնեն տեղը. հակառակ դէպքում, անպատճառ կուղարկուին զինուորներ (էկզէկուցիա) իրենց հաչուով պահելու։ Անցաւ չորս օր, և այժմ լսում ենք, թէ չուտով կըգան այդ զինուորները թուրքերին հիւր։ Նըմանպէս լսեցինք, թէ տանուտէրի օգնական սարալցի Մահմադին տարել են չափարներով Ալէքսանդրապոլ՝ գաւառապետի հրամանով բանտարկելու։

Հարևան գիւղերի թուրքերը անչափ մնասներ են հասցնում մեր խաղաղ երկրագործ ժողովրդին։ Չկայ մի թուրք տուն, որ չունենայ արադաձիգ հրացաններից մէկ կամ երկու հատ։ Ամենայն տեղից փախած աւազակներն այս կողմերը պատսպարան են գտնում այդ թուրքերի մօտ և ատանում ամեն օգնութիւն։

ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՐԻՔԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԳԱՒԱՌՈՒՄ։

Ախալքալաքի գաւառը հայ բնակիչների կողմից առաջին տեղն է բունում ամբողջ Թիֆլիսի թեմում, բայց դժբաղդաբար այդ հայաբնակ գաւառի 72 գիւղերում ներկայումս կան միայն երեք հատ միդտեան եկեղեցական-ծխ. դպրոցներ, որոնք անցեալ տարի բացուեցան։ Այդ դպրոցները չինուած են Կարզախ, Ձանձղա և Խանդո գիւղերում։ Ձանձղա և Խանդո գիւղերի դպրոցները հետու են ուսումնարանի կարգ ու սարքից և գանուում են անյաջող դրութեան մէջ, և գուցէ չուտով փակուին։ Միայն Կարզախ գիւղի ուսումնարանն է, որ բաւարար դրութեան մէջ է։ Տարբաղդաբար, Կարզախ գիւղն էլ հեռու և առանձնացած լինելով միւս բոլոր հայաբնակ գիւղերից, չէն կարող միւս գիւղերի մանուկները օգտուել այդ դպրոցից։ Այդպիսով, եկեղեցական պատկանելի գումարները, որոնք դուրս են գալիս ժողովրդի գրպանից, կորչում են առանց մի որ և է օգուտ տալու նոյն այդ ժողովրդին։

Ախալքալաքի գաւառի եկեղեցիները ունին 33,000 րուբլուց աւելի դրամ։ Այդքան գումար ժողովինելով մատանելն են ցոյց տալիս. իսկ գիւղի քահանան և երեսփոխը միչտ ստորագրեթիւ ունին գիւղական հասարակեթեան պահանջի համեմատ եկեղեցապատկան գումարը միչտ աւելի պակաս ցոյց տալ իսկականից։ Կան միքանի գիւղեր, որոնք, կամ եկեղեցու մէջ, կամ տէրտէրի տանը, ունին սրբոց մասունքներ և հին ձեռագիր աւետարաններ, ուր ուխտաւորներ են յաճախում. այդ սրբոց մասունքներն և ձեռագիր աւետարաններն ևս բերում են տարկան մի որոչ արդիւնք ժողովրդից։ Արդեօք ինչ են լինում այդ փողերը, որ իսկ մի օգուտ տալիս ժողովրդին կամ եկեղեցուն։ Ցաւելով պիտի ասենք, որ այդ փողերը կորչում են այս կամ այն մասնաւոր անհատների մօտ։

Այս պատկառելի գումարների տոկոսները, եկեղեցիների տարեկան ծախսումները, սրբոց մասունքների—ուխտատեղիների արդիւնքը հաւաքելով միասին, կարելի կըլինէր պահպանել միքանի կեդրոնական եկ. ծխ. դպրոցներ։ Ժողովուրդն արդէն զգում է ուսման պահանջը, հետաքրքրւում է լրագրներով, գրքերով, բայց և այնպէս հարիւրաւոր երեխաներ մնում են առանց ուսման, առանց տարրական կրթութեան։

Վայոյս ենք, որ Ախալքալաքի միքանի յայտնի պարոնները չեն խնայիլ իրենց ջանքն իրենց գիւղացի եղբայրների համար, կըմխանան գիւղի քահանաների, առաջնակարգ ու հարուստ գիւղացիների հետ և բաց կանչն գիւղացի մատաղ սերնդի առաջ ուսման դռները...

Անչափ ուրախալի է, որ այժմ ձեռք են առել և կառուցանում են գաւառի Օլավերա գիւղում հայոց ուսումնարան, որի հիմնադիրն է Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու միաբան հանգուցեալ արժ. Եղիչէ քահանայ Տէր-Գրիգորեանը, որ իւր մահից առաջ կտակել է մի որոչ գումար, իւր ծննդավայրի Օլավերա գիւղի նոր բացուելիք դպրոցի համար. այդ գումարի տոկոսով պէտք է դպրոցը կառավարուի չարունակ։

Բ.

ՄԻ ՆՈՐԱՀՆԱՐ ՀԱՄԱՐԻՑ

Մօտ օրերս Աւճալեան փողոցով անցնելիս, մեր ուշադրութիւնը գրաւեց ի յոյս գրուած մի անսովոր ձևի համարիչ։ Մինչդեռ հետաքրքրուած դիտում էինք այդ նորահնար համարիչն և աչխատում գրա գործածութեան գաղտնիքը գտնել, դինու պահեստի նկուղից նուրհեան վրայ։ Ընդհակառակն, մենք այնպէս ենք համոզուած, թէ՝ եթէ կարելի լինէր անգլիական կառավարութեան քաղաքականութիւնը մարմնացնել, մարդկային կերպարանք տալ նրան,—նա անպատճառ դուրս կըզար մի կին։

Իսկ նեայի սեռը յայտնի է իւր որոչ բնաւորութեամբ...

Այնուամենայնիւ սա պատճառ չ կարծելու, թէ Սասունի կոտորածն այս կամ այն պետութեան դիպլոմատիայի առաջ բերից, և մասնաւորապէս անգլիական դիպլոմատիային։

Այդ կոտորածների բուն պատիժը պէտք է որոնել նախ՝ Թրքա-Հայաստանին տիրապետող դրութեան և երրորդ՝ Թուրք կառավարութեան դէպի այդ դրութիւնը բռնած քաղաքականութեան մէջ։

Նախ քննենք առաջին կէտը։

(Կըշարունակուի)

Mars.

բացարձակ ոճիր է գործել...

Հենց այդ ոճրագործութեան ծանր յանցանքն է, որ Օսման-բէյն ուզում է սրբել իւր կառավարութեան ճակատից։

Սակայն, դա ջնջուող, սրբուող մուր չէ։ Այդ չատ լաւ գիտէ նա, դրա համար էլ, որ ոճիր է գործուած՝—չէ ուրանում, այլ աչխատում է դէթ Սասունից չատ հեռու գտնուող գերմանական պատի առաջ իւր կառավարութիւնը պարզերես դուրս բերել, ուսած այդ յանցանքը փաթաթում է ուրիշի վզին, այդ մուրը քսում ուրիշի ճակատին։

Այդ ուրիշը հանդիսանում է դիպլոմատիան, և այն՝ անգլիական դիպլոմատիան։

Աւազակ քիւրդերն և սուլթանական իրադէով զրգռուած զօրքերը կոտորել են հայերին, այրել ու քանդել են գիւղերը, յափչտակել են ժողովրդի ունեցած չունեցածը, ոտքի տակ են տուել նրանց արտերն ու այգիները, մի խօսքով, բնաջինջ են արել ամբողջ Սասունը...

Իսկ ով է միտաւոր այս ահռելի գործի մէջ։

—Դիպլոմատիան և այն՝ մասնաւորապէս անգլիական դիպլոմատիան։

Սա Օսման-բէյի կարծիքն է։

Սա արդարացման մի չատ տարօրինակ հղանակ է։

Այստեղ ստիպուած ենք կրկնելու մեր յօդուածի երկրորդ գլխում ասածը. Թիւրքիան ներկայ պայմանների մէջ չատ նման է դատապարտեալներին յատուկ սև նստարանի վրայ նստած ոտքից ցգլուխ մի յանցաւոր մարդու, որին կամենում են պաչտպանել, և թէ այդ պաչտպանութեան ծանր գործն ստանձնել է ինչ-որ մի անյնորհք փաստաբան։

Օսման-բէյի պատասխանատուութեան դատարկութիւնը երևում է իւր յօդուածի առաջին տողերից, բայց և այնպէս, մենք կարծում էինք, թէ Թուրք դիպլոմատներին՝ ընդհանրապէս, և Կարա-Թէոդորին՝ մասնաւորապէս չհաւանող և նրանց դէրն ստանձնող այդ յանդուգն մարդը իւր հզօր փաստերը, իւր մըտաւոր ոյժերն և քաղաքական իրաւաբանութեան արհեստի բոլոր նրբութիւնները հանդէս պիտի բերի իւր պաչտպանողական պրութեան վերջին տողերում։

Անչուշտ այսպէս պիտի համոզուած լինէին այն ամենքը, որոնք կարդում էին նրա յօդուածը։

«Սասունի կոտորածները» վերնագիրը կրող գլուխը, որով վերջացնում է իւր ասելիքը, իւր պաչտպանողական ճառի եղրակացութիւնն է։

Բայց ինչ ծիծաղելի բան... ինչ է ասում նա այդ գլխում։

Սակայն ո՛չ. նա այստեղ մի բան ասում է. նա քարոզում է և հաւատացնում, որ դիպլոմատիան սկզբունքով սիրտ չպիտի ունենայ... Թող քիւրդերը և օսմանեան զօրքերն իրենց զէնքերով ու թնդանօթներով բնաջինջ անեն ոչ միայն Սասունը, այլ ամբողջ Թրքա-Հայաստանը,—նա՝ դիպլոմատիան ըստ-նէ-նէով ձայն չպիտի հանի, ձայն հանելու էլ իրաւունք չունի...

Ապա, ֆրանսիացի մի հեղինակի իւր հեղինակութիւնը վաճառելու համար ունկնդիրի պէտք ունենալու մի բոլորովին անմիտ օրինակ առաջ բերելով, եղրակացնում է, թէ Սասունի կոտորածն ևս ունկնդիր էր, կամ սրա նման մի բան, որ սարքուած էր դիպլոմատիայի ձեռքով և այն՝ անգլիական դիպլոմատիայի։

Այժմ քննենք այս հարցին վերաբերող հետևեալ կէտերը.

Նախ՝ Սասունի կոտորածների մէջ դիպլոմատիան մատն ունեցել է...

Երկրորդ՝ այդ կոտորածն դիւանադիտական ռեկլամ է...

Երրորդ՝ այդ կոտորածների մէջ ոմն է մեղաւոր — դիպլոմատիան, հայը, քիւրդը, թէ օսմանեան կառավարութիւնը։

Դիպլոմատիա ասելով Օսման-բէյն ընդհանրապէս անգլիականն աչքի առաջ ունի և, ինչպէս տեսնում է նրա ամբողջ յօդուածից, մի առանձին հակակրութեամբ ու բուռն ատելութեամբ է վերաբերում դէպի բրիտանական կառավարութիւնը։

Արդէն մենք էլ չատ մեծ համարում չունինք անգլիական կառավարութեան *) անկեղծ և անչահասէր քաղաքակա-

*) Խնդրում ենք, որ ընթերցողն առանձնապէս ուչադրութեան առնէ, թէ մենք խօսում ենք բացառապէս Թուրքիայի քաղաքականութեան վրայ, և մեր խօսքն ամենևին չի վերաբերում անգլիական պատուական հասարակութեան ու մանաւանդ ազնիւ ներկայացուցիչներին։

դաբրս եկաւ մի պարոն. անմիջապէս դիմացինք նրան և խնդրեցինք իմանալ, թէ որտեղից են այդ համարիչը ձեռք բերել։ Պարոնը սիրով ընդունեց մեր հետաքրքրութիւնը, և բողոքին զարմացանք, երբ յայտնեց, որ այդ համարիչը իւր հնարածն է և ամենահեշտ միջոցով կարող է ամենաբարդ խնդիրները վճռել կարճ միջոցում։ Մեր հետաքրքրութիւնն աւելի չարժուեցաւ, և խնդրեցինք, որ մեքանի վորձերով ցոյց տայ դրա առաւելութիւնն ու դիւրութիւնը սովորական համարիչներից։ Մեզ հրաւիրեց նկուղ։ Սկսեցինք գումարման գործողութիւնից. 7-8 կարգ 10 հազարաւոր և 100 հազարաւոր թուեր գրեցինք և հաւիւ թէ մենք միաւորների գումարն էինք սացել, երբ նա արդէն վերջացրել էր և դիմելով մեզ՝ ասաց.

«Ես վերջացրի. գումարը ճիշտ սացայ, իսկ դո՛ւք... Մենք չալուհանակիցինք մերը, որպէսզի ճչտենք։ Պարոնի մեզանից մեքանի րոպէ առաջ ստացած պատասխանը բոլորովին ճիշտ էր։

Առաջարկեցինք չորս գործողութեամբ խնդիրներ, տոկոսների խնդիրներ և նոյն յայտնութեամբ, աննշմարելի ժամանակամիջոցում ստացաւ ճիշտ պատասխանները։

Այնուհետև խորհուրդ տուինք պարոնին, որ այդ փառաւոր գիւտը ծանօթացնէ հասարակութեանը։ Պարոնը ասաց.—չատ մարդիկ են մօտս եկել, չատերն են գոհ վերադարձել, չատերին անձամբ հրաւիրել եմ և յայտ հետեւանքը ցոյց տուել, բայց ոչ մէկը չէ վստահանում յանձն առնել սրան տարածելու գործը, իսկ իմ միջոցները չեն ներում այդ անել։ Անցեալ օրը, չալուհակից պարոնը, այս համարիչը հետս առած, ներկայացայ մեր թանկագին հիւր պ. Դիլլոնին. Դիլլոնը յափշտակուեց գործածութեան յայտ հետեւանքից և զարմանք յայտնեց, որ ոչ ոք հայերից չէ գնահատել այդ գործն և խոստացաւ, որ երբ հայրենիք վերադառնայ, իւր քաղցր պարտականութիւնը կը համարէ յայտարարել մամուլի միջոցով հասարակութեան, և յոյս է տուել, որ կը յայտնեցնէ մեզին գտնել, որ դրա արտօնութիւնը դնէ։

Հայ վաճառական դասի ուշադրութիւնն ու խրախուսանքն ենք հրաւիրում հետաքրքրուել այդ գիւտով, և վրատահ ենք, թէ գոհ կը մնայ այդ համարիչի միանգամայն դիւրին գործածութիւնից, և թոյլ չի տայ, որ հետու եւրոպայից գայ այն ապակցութիւնը, որը կարող է ցոյց տալ ինքը՝ մեր հայ վաճառական դասը։

Հնարողը տարիքով և խիստ ուսումնասէր մի պարոն է, Ն. Նիկողայոսեան ազգանունով. սկզբնական կրթութիւնը ստացել է Շուշի քաղաքում, իսկ այնուհետև ինքնաչխատութեամբ կարողացել է առաջ գնալ։ Ինքնաչխատութեան հետևանք է և այդ փառաւոր գիւտը, որ մեր վրայ չատ մխիթարիչ տպաւորութիւն թողեց։

Հետաքրքրուողները կարող են տեսնել այդ համարիչն և ծանօթանալ նրա նպատակայարմար գործածութեան հետ հնարողի մօտ, Աւճալեան փողոց, № 1, Փիրումեանցի պինու պահեստում։

*

Թիֆլիս, 25 մայիսի։

ՄԵՐ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՑ ՎԻՃԱԿԸ։

—

Կովկասեան գինեգործութիւնը վերջին տարիներս զգալի կերպով հարուած կրեց, և այդ հարուածը մինչև այսօր չարունակւում է։ Եթէ որ քննենք լինինք այդ հարուածի պատճառները, կտեսնենք, որ դրանք որչափ ներքին հանգամանքներն էին, այնչափ էլ արտաքին։ Ներքին հանգամանքները ասելով, ես հասկանում եմ մեր գինեգործութեան յետամնաց վիճակը, վաճառականութեան մէջ ունեցած անհմտութիւնը, առևտրի առկախ դրութիւնը, բնութեան հարուածներն և այս ու այն չրջանում երևացած խաղողի ու վազի հիւանդութիւնները։ Արտաքին հանգամանքներն են. մեր գինիների մինչև այժմ Ռուսիայում մի որոշ տեղ չբռնելը, Բեսարաբիոյ, Դոնի, Խրիմի ու Դաղստանի գինիների մրցումը, կեղծ գինիների ու չամչի գինիների լայն ծաւալ ստանալը և մեծ ֆիրմաների բռնած ընթացքը։

Թէ մեր գինեգործութեան սիստեմի մէջ դեռ չատ բաներ կան փոփոխելու, դրան կասկած չկայ. սակայն մենք սովոր ենք «հատ ու բարակ մի գին ունի» ասելով, ոչ մի ջանք գործ չդնել բարելաւացնելու կամ առնուազն ամեն տարի մեր այդիներից ստացուած բերքը այնպիսի պայմանների մէջ դնելու, որ նա չվնչանայ, և միշտ իւր արժէքն ունենայ։ Մեզանից ամեն մէկը գիտէ, թէ ինչ ձեով է կատարւում տեղական գինեգործութիւնը, այդտեղ ոչ խաղողի ընտրութիւն կայ, ոչ հասունութեան նայած չանչերից ջոկել կամ պահել, ոչ չիբայի եվ տալու պայմանների հատկացութիւն, ոչ ամանների մաքրութիւն, ոչ գինիների դիրքից մաքրելու հոգս, մի խօսքով գինեգործութեան տարրական պայմանների անգիտակցութիւն և, որ ցաւալին է, սովորելու և կատարեգործելու անհետաքրքրութիւն։ Այն ինչ, մեղանից աւելի զարգացած ազգերի մէջ գինեգործութիւնը, չնայելով որ աւելի դժուար պայմանների մէջ է դրուած, այնուամենայնիւ մտած է որոշ սիստեմի տակ, և քաղաքացի թէ չինական հեռուում է այդ ծրագրուած և գործնականապէս մշակուած կանոններին, և այսօր տեսնում ենք, որ նրանց գինիները համաշխարհային նչանակութիւն են ստացել ու տարածուել երկրագնդի ամեն մի անկիւն։

Ինչո՞ւ,—որովհետև նրանց ամեն մի քայլը չափւում, կշռւում է, ամեն մի գործողութիւն զգուշութեամբ և հաշուով է կատարւում և ոչ թէ բաղդի բերմունքին թողնելով, մեզ նման «հատ ու բարակ մի գին ունի» ասելով՝ բաւականանում։

Սակայն թողնենք մեր գինեգործութեան նահապետական դրութեան պակասութիւնները և դառնանք այն հարցին, թէ մեր Կովկասեան գինիներն ընդհանրապէս և Դանձակինը մասնաւորապէս ինչ տեղ են բռնում Ռուսիայում, ինչ ձեով է կատարւում մեր գինեվաճառութիւնը, ովքեր են գնողներն և ծախողները և թէ ինչ յոյս կայ մեր գինիների արժէքը բարձրացնելու ու մեր այդհետերի դրութիւնը լաւացնելու։

Նրանք ամիս չարունակ պատելով Ռուսիայի գրեթէ բոլոր չատ ու քիչ գինեվաճառութեամբ յայտնի քաղաքները, ի մօտոյ ծանօթանալու մեծ ֆիրմաների պահանջների և նրանց առևտրի եղանակի հետ, ես հետևեալ եզրակացութեան եկայ, որը չեմ կարծում անհետաքրքրական լինի մեր այգեհետերի և գինեվաճառների համար։

ա) Մեր Կովկասեան գինիներից միայն Կախէթի գինիների անունը կայ մեծ ու միջակ ֆիրմաների գինիների ցանկի մէջ. Դանձակի, Երևանի, Մադրասի Վերբենդի ու Դաղստի գինիների անունը կայ, ինքը չկայ, չնայելով որ Կովկասի 16 միլիոն վեդրո գինիների մէջ Կախէթինը մի փոքր տեղ է բռնում և դլխաւորապէս մեզանում Կովկասումն է սպառւում։ Բայց ինչ են պառնում, ուր են գնում մեր այդքան գինիները, որոնց անունը չկայ, իրենք կան։ Ահա թէ ուր.—դրանց այս ու այն մեծ ֆիրմաներն առնելով, զանազան խառնուրդներով ու կեղծիքներով այնպիսի փոփոխութեան են ենթարկում, որ այլ ևս դժուար է ճանաչել, թէ որտեղի գինի է, և ահա մի օր նրա գործարանից կամ պահեստից դուրս են գալիս բորդո, նուի, սոտերն, մալագա, խերէս, պորտվէյն, գրենաչ, կապոր, կիպր, ռիսլինգ և այլ հարիւրաւոր անուններով։

բ) Մեծ ֆիրմաները, որոնց թիւը չատ էլ մեծ չէ Ռուսիայում, այդպէս պատրաստած գինին բաց են թողնում երկրորդ կարգի ֆիրմաներին, դրանք էլ երրորդ կարգի վաճառականներին, նախապէս մկրտելով և իրենց ուզած համն ու հոտը, էտիկէտը տալով և ապա թէ երրորդ, չորրորդ ձեռքից գնում է ժողովուրդը, սկզբնական գնի 5-10 անգամը վճարելով։ Եւ այս վերոյիշեալ գործողութիւնը, մեր գինիների զանազան վոխակերպութիւն ստանալը չարունակւում է տարուէ տարի և պիտի չարունակուի. Ուրիշ կերպ էլ անկարելի է, քանի որ Կովկասեան այս ու այն գինեգործական չրջանները մինչև այսօր չկարողացան իրենց սեպհական պահանջներն ունենալ այս ու այն գլխաւոր կեդրոններում, ուր իրենց գինիներն ժամն գնով կարելի լինի մտցնել ժողովրդի մէջ և նրանց համար պահանջ դարձնել։

գ) Մեծ ֆիրմաները, որոնց թիւը չատ էլ մեծ չէ Ռուսիայում, այդպէս պատրաստած գինին բաց են թողնում երկրորդ կարգի ֆիրմաներին, դրանք էլ երրորդ կարգի վաճառականներին, նախապէս մկրտելով և իրենց ուզած համն ու հոտը, էտիկէտը տալով և ապա թէ երրորդ, չորրորդ ձեռքից գնում է ժողովուրդը, սկզբնական գնի 5-10 անգամը վճարելով։ Եւ այս վերոյիշեալ գործողութիւնը, մեր գինիների զանազան վոխակերպութիւն ստանալը չարունակւում է տարուէ տարի և պիտի չարունակուի. Ուրիշ կերպ էլ անկարելի է, քանի որ Կովկասեան այս ու այն գինեգործական չրջանները մինչև այսօր չկարողացան իրենց սեպհական պահանջներն ունենալ այս ու այն գլխաւոր կեդրոններում, ուր իրենց գինիներն ժամն գնով կարելի լինի մտցնել ժողովրդի մէջ և նրանց համար պահանջ դարձնել։

Սեպհական պահեստների բացակայութեան պատճառով մենք ստիպուած ենք մեր գինիները պատահական հաշպողէնդէ վրայ ծախելու, իսկ այդ պատահական մուշտարիները, լինին նրանք մեծ թէ փոքր ֆիրմայի տէրեր, իրենց չահերը պահպանելու համար, միչտ պիտի դիմեն կեղծիքի, զանազան խառնուրդների և արհեստական միջոցների, որպէսզի գոհացուցմն տան իրենց գնողներին, որոնք սովորել են մեծահնչիւն անուններ կրող գինիների։ Եւ այսպէս վարուելը պատճառաբանում են չատ իրաւացի կերպով, որ մենք կովկասցիներս ենք մեղաւոր, որովհետև ամենայն տարի փոփոխում ենք մեր գինիները, իսկ իրենց գնողները մի անգամ մի գինու վարժուած լինելով, չարունակ նոյն գինին են պահանջում իրենց գինեվաճառից։

Այս բանը տեղիք է տալիս մեզ մտածելու, որ ելնէ այդ ձեով չարունակենք մեր գինիների արտահանութիւնը, նրանք երբէք հռչակ չեն ստանալ, կը մնան անյայտութեան մէջ, ինչպէս որ մնացել են մինչև այժմ։

է) Բացի այն, որ մեր գինիները կախում ունեն այս ու այն ֆիրմայի կամ պատահական մուշտարիների կամայականութիւնից, այլ և հետարբիոյ, Խրիմի, Դոնի գինիների տարուայ բերքից։ Որչափ տեղեկացանք, առհասարակ այն տարին յաջողութիւն ունին մեր գինիները Ռուսիայում, երբ որ և է հարուածով վնասուել են տեղական գինիները, երբ նրանք նախորդ տարիներից թէ պակասութեամբ սոսկ են և թէ քանակութեամբ քիչ. ահա այդ ժամանակ մեր Կովկասեան մուշ, կոշտ ու թունդ գինիները մի տեսակ պահանջ են դառնում նրանց համար, ինչպէս խառնուրդի, լաւ միջոց։ Բայց այն տարիները, երբ ամեն տեղ յաջող է գինու բերքը, այն ժամանակ Ռուսիայի գինեվաճառն ընտրում, գնում է այն գինիները, որոնք իրեն ժամն են նստում։ Իսկ ժամն կարող է նստել իրեն աւելի մօտ եղող ընչանի գինին, քան Կովկասինը, որի փոխադրութեան ծախքը միայն վեդրոյին 40—60 կոպ. աւելի է քան Ռուսիայինը։

է) Մեր գինիներին փոքր հարուած չի տուել և դեռ պիտի տայ իրենց ասում չամիչը, որ ստանում են Ցունաստանից հարաւային և արևմտեան նահանգներում հազարաւոր պուդերով։ Այդ չամիչը, որ առաջները 60—70 կոպէկով էր ծախւում պուդը, այժմ, մեծ պահանջ լինելու պատճառաւ, ծախւում է 1 ր. 20 կոպ։ Այդ չամիչի մի պուդին 2½-ից մինչև 4 վեդրո ջուր խառնելով, պատրաստ են և յետոյ, ինչպէս խաղող, ջարդում են ու ամաններում եփ տալիս և ստանում առաջին, երկրորդ և երրորդ կարգի գինիներ, որոնք բնականից չատ քիչ են զանազանւում և արժենում են 60 — 70 կ., այն ինչ մեր գինիների ճանապարհածախքը միայն այդքան արժէ։ Այսպիսով գինեվաճառութեան մէջ լայն ծաւալ ստանալով կոբինկան, ոչ միայն պիտի վնասէ Կովկասեան այլ և հարաւային Ռուսիայի գինիներին։ Մի քանի ֆիրմաներ այդ վտանգը տեսնելով, խնդրամատոյց են եղել ֆինանսների մինիստրին, որ բարձր մաքս նչանակելով կորինկայի համար, առաջն առնի. Կովկասն ևս իւր ձայնը պիտի միացնէ նրանց հետ, եթէ ցանկանում է իւր գինիների զարգացումը։

Կ. Կ. Մելիք-Շահնազար.

(Վերջը միւս թղթում)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱ.—Մակեդոնիայում գործ դրուած թուրք բարբարոսութիւնների մասին բուլղար թերթերը հետևեալն են հաղորդում.

Չատկան սոների ժամանակ բուլղարական վալեանի գիւղը գնացին միքանի թուրքեր, որոնք մտնելով մի գիւղացու տունը կամեցել են նրա գեղեցիկ աղջիկը առևանգել. սակայն վերջինիս յաջողուել է ազատուել նրանց ձեռքից։ Թուրքերին օգնութեան են հասել ուրիշ միքանիներ ևս, և նրանք, վերադառնալով վալեան, բռնել են աղջկան ու նրա եղբայրներին, տարել են Պրիլէն կոչուած տեղը, ուր աղամարդոց սպանել են, իսկ աղջկան բռնաբարել։ Սակայն այդքանը չէ միայն։

Կրուչով գիւղի չրջակայքի թուրքերը որոշել են յարձակուել այդ գիւղի վրայ։ Այդ բանի առաջն առնելու համար, տեղական իշխանութիւնը գիւղում տեղաւորել է 300 ալրանիացի, որոնք, հակառակ իրենց պաշտօնին, սկսել են ժողովրդին նեղացնել։ Չատկի օրը, մի մանկամարդ բուլղարուհի իւր մօր հետ պէտք է ուներկել եկեղեցուց վերադարձած ժամանակ անցնել մի նեղ փողոցով, ուր յանկարծ նրանց առաջը կըտրել են հինգ թուրք գինուորներ։ Նրանք աղջկայ զարդերը խլելուց յետոյ, քարշ են տուել մերձակայ մի բնակարան, և այդտեղ ամենաբարբարոս կերպով բռնաբարել են անպաշտպան կոյսին։ Շեպլենց գիւղից ոչ չատ հետու թուրքերը սպանել են մի բուլղար։ Պետրո և Իօան Տրէյչով եղբայրներին Ալի անունով մի թուրք սպանել է Դիբեր քաղաքում. ոճրագործ թուրքն այդ քաղաքում և նրա չրջակայքում վայելում է ամեն ազատութիւն իւր չարագործութիւնների մէջ։ Սերէսի չրջանում փողոցի մէջ գտել են սպանուած և թալանուած մի բուլղարի դիակ. Բէլնա գիւղի հինգ բուլղարների վրայ, մի ուրիշ գիւղ գնացած ժամանակ, յարձակուած է թուրք աւազակային մի խումբ 10 հոգուց բաղկացած, որը բուլղարներից ըսպանած է չորս հոգի։

—

ՋԻՆԱՍՏԱՆ. —Փորմոզայի հասարակապետութիւն հրատարակելու մասին արտասահմանեան թերթերը հետևեալ մանրամասնութիւններն են հաղորդում։ Այդ գործում գլխաւոր դերը խաղացել է գեներալ Կուխուն-Կուկը, որը պատկանում է հակկիսների ցեղին և քաջալերել է բնակիչների ձգտումներն ու չարժումները։ Առաջին անգամ կղզու հիւսիսային մասի թագաւոր է հրատարակել իրեն, և, հակառակ չին կառավարութեան գործ դրած չանքերին, գօրքը անցել է նրա կողմը. իսկ յետոյ գործը ստացել է արդէն բոլորովին ուրիշ ուղղութիւն։ Կղզու կառավարչապետ Տանգ-Շինդ-Նունգը, որ փոխ-արքայի անունով կառավարում է կղզին, բացարձակ կերպով յայտարարել է, որ, ոչ մի կերպով չի կարող կղզին ճանապարհել Չինաստան, մանաւանդ որ կղզու ներկայ բնակիչները ժառանգներն են այն չին գաղթականների, որոնք 200 տարի առաջ գաղթել են Չինաստանից։ Ներկայ ժամանակ կղզու մէջ կայ 2½ միլիոն բնակիչ, որոնցից 200 հազարը հնդկացի են, 100 հազարը մալայացի, 50 հազարը չին, 10 հազարը եւրոպացի, մնացեալները ամերիկացի։ Կղզին ունի 13,000 քառակուսի մղոն տարածութիւն։ Կղզու հիւսիսային մասում կան հանքեր, որոնցից ոսկի են հանում։ Կղզին ունի 1,000 մղոն երկաթուղի։ Կղզու հիւսիսային մասում կան հանքեր, որոնցից ոսկի են հանում։ Կղզին ունի 1,000 մղոն երկաթուղի։

—

ՖՐԱՆՍԻԱ.—Ֆրանսիական պարլամենտի մի յանձնախումբ, որ ընտրուած էր հասարակաց աշխատութեան նախկին մինիստր Բէյնալի գործունէութիւնը քննելու, այն եզրակացութեան է եկել, որ Բէյնալին դատի ենթարկելու ոչ մի հիմունք կամ փաստ չկայ։

—

Մօտ օրերս խորտակուած ֆրանսիական «Դոն-Պատրո» չոգենաւի վրայ, հաղորդում են, որ 110 մարդ է խեղդուած, հաշուելով սրանց թուում նաև նաւաստիներն ևս, թուով 54։

—

1900 թուին տեղի ունենալի ֆրանսիական համաշխարհային ցուցահանդեսի համար մշակուած են բազմաթիւ ծրագրներ, որոնց մէջ բաւական մեծ տեղ է տրուում ժողովրդական զուարճութիւնների ճիւղին, և դրանց համար ծախս հաշուած են 4,471,000 ֆր.։ Միմիայն այդ թուից կարելի է մակաբերել, թէ ինչ ահագին պատրաստութիւններ պիտի տեսնուին ամբողջ ցուցահանդեսի համար,

—

Մայիսի 20-ից, (1 յուն.) Աթէնքից հեռագրում են, որ Կեֆալոնիայում (Ցունաստան) զգացուած են երկրաչարժի սաստիկ ցնցումներ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Աչխարհի ամենամե-ծահաս.—Աչխարհի ամենամեծահասակ կանայք, Ֆիլդինգ ճանապարհորդի կարծիքով, կարելի է համարել բիրմանուհիներին։ Երկրագնդի վրայ ոչ մի ժողովուրդ կանանց այն տեսակ իրաւունքներ տուած չէ, որպիսիք վայելում են Բիրմանիայի կանայք։ Թէև բանաստեղծները գովաբանած չեն բիրմանուհիներին և թէև պատկերն ակնդետս միակ նկարը համարած չեն նրանց, սակայն օրէնքը նրանց տրամադրութեան տակ է դրել այնպիսի իրաւունքներ և առաւելութիւններ, որոնք զօրեղապէս նպաստած են նրանց ազատ զոլզոց-

ման, որի հետ միասին բիրմանուհին պահպանել է իր կանացիութեան ամբողջ գրաւչութիւնը։ Բիրմանուհու առաջ ամեն ասպարէզ բաց է, և իրաքանչիւր կին այնտեղ ունի իր առանձին զբաղմունքը. օրինակ, ամբողջ մանրավաճառութիւնը գտնւում է կանանց ձեռքում, և առուտուրը առհասարակ այնտեղ, երեք ժամ միայն տեւելով, բիրմանուհիները կարողանում են միևնոյն ժամանակ տեսնել իրենց տնային գործերը։ Ֆիլդինգը նկատում է, որ չնայելով ամուսնական կապերի չատ թոյլ լինելուն, ամուսնալուծութիւնը Բիրմանիայում համարեա մի տոկոսի անգամ չի հասնում, իսկ զաւակներ ունեցող ծնողների մէջ ամենևին չի պատահում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ
ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ, 23 Մայիս.—Վախճանուեցաւ բժշկականութեան դոկտոր Ալ. Վաս. Ելիսէևը, որ յայտնի է իր կատարած ճանապարհորդութիւններով Ասիայում և Աֆրիկայում։

ՊԱՐԻԶ.—Թուրքաց դեսպանը Գանոտոյին յայտնեց, որ Հէջազում, սուլթանի հրամանով զինուորական-պատերազմական դատարան է հիմնւում գտնելու և անխնայ կերպով պատժելու այն բեդուինները, որոնք մասնակցել են Ջիդդէի շրջակայքում հիւպատոսների վրայ գործուած յարձակմանը։ 10 բեդուինների դէմ արդէն դատ է բացուած։ Դեսպանը կրկին անգամ իր կառավարութեան կողմից խորին ցաւ յայտնեց տխուր անցքի առթիւ.

ՀՌՈՄ.—«Tribuna»-ն հերքում է լրագրների հաղորդած այն լուրը, թէ ընդհանուր պրոկուրորը Ջիօլիտտիի գործին վերաբերեալ դոկումենտները ղրկել է արդարադատութեան մինիստրին՝ պատգամաւորների ժողովին ներկայացնելու համար։

ԼՈՆԴՈՆ, 24 Մայիս.—Հոնգ-Կոնգից հաղորդում են, որ ճապոնացիները տիրել են Կելունդին. չինացի ապստամբներից սպանուած են մօտ 300 հոգի։

Հեռագիր Շանքհայից. «Ամբոխը Չենգտուում քարուքանդ արեց կաթոլիկ և բողոքական միսիօնարների տները։ Իրենք միսիօնարները տեղափոխած էին ապաստան որոնել չինական պետական հաստատութիւնների մէջ։

ԼՈՆԴՈՆ.—Շանքհայից ստացուած տեղեկութիւններից երեւում է, որ Ֆորմոզա կղզին պաշտօնապէս յանձնուած է ճապոնական ծովակալ Կո-Բայ եամին։

ՄԱՏՐԻԴ.—Պահեստի զօրքի մայօրներց մէկը մտաւ Մադրիդի գեներալ-կապիտանի վարչութիւնը և երկու անգամ հրազէն պարպելով գեներալի վրայ, ծանր կերպով վիրաւորեց նրան։ Ոճրագործը ձերբակալուած է։ Ըստ երեւոյթին, նա հոգեկան հիւանդութիւն ունի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ, 25 Մայիս.— Այսօր, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեոդորովնայի ծննդեան օրը Իսահակեան տաճարում մաղթանք կատարուեցաւ մեծամեծների և պալատականների ներկայութեամբ։ Մայրաքաղաքը զարդարուած էր, երեկոյեան լուսավառութիւն կըլինի։ Մեծ ընդունելութիւն Պալատում չկար։

Չինուորական մինիստր Վաննովսկին մայիսի 14-ից ձեռքերի և ոտների սուր ոսկրացաւ է ստացե։

ՎԻՏԵՒՍԿ.—Երեքշաբթի օրը խիստ փոթորիկի ժամանակ այրուեցաւ Նևել քաղաքը։ Մանրամասն տեղեկութիւններ դեռ ևս չկան, բայց յայտնի է, որ խիստ վնասուել է աւազ եկեղեցին, այրուել են դպրոցները, միքանի վարչական տեղեր, հեռագրատունը և բազմաթիւ տներ։

ՀՌՈՄ.— Մաջենտում բացուեցաւ Մակ-Մահոնի արձանը, որ կանգնել է քաղաքը։ Ներկայ էր մի պատգամաւորութիւն ֆրանսիական սպանների կողմից։

Կ. ՊՈԼԻՍ.—Չիզդէյում վիրաւորուած ռուսաց հիւպատոսարանի կառավարիչը և ֆրանսիական հիւպատոսարանի քարտուղարը ղրկուած են Սուէզ։

ԼՈՆԴՈՆ.—Աւղանական էմիրի որդին Ուէլսի պրինցի հետ ներկայ էր զօրահանդէսին, որին մասնակցում էին թուով 24,000 զինուոր։

Հոնգ-Կոնգից հաղորդում են. «Իմանալով, որ ճապոնացիները Ֆորմոզա են մտնում, ամբոխը և չինացի-ապըստամբներն սկսեցին աւարի մատնել պետական հաստատութիւնները Թայպոխֆում և Խոքէյում։ Ֆորմոզայի հասարակապետութիւնն ընկաւ։ Նախագահը փախել է»։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ընդրկովկ. երկաթուղի

—

Մարդատար գնացքը Թիֆլիսից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիսից Բաթում դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7. ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիսից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացք Բաթումից Թիֆլիս դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիս հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիս հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիս դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիսից հասնում ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիս-Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր., հասնում Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիս դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին, հասնում է Թիֆլիս առաւօտուայ 7 ժ. 35 րոպէին։

Պատ. երթ. Ուղեմատոյցական ճանապարհով

—

Թիֆլիսից հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորւում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից հինգ հոգու տեղ ունեցող կառքը (օմնիբուս) ուղևորում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորւում է առաւօտուայ ժամը 8 ին գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիս է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Թիֆլիս հետևեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։



Ռուսաց Հ. ոտ. Ընկ.

Ամեն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն

Բաթումի, Օդեսսայի եւ Կ. Պոլսո միջեւ

Բաղնուելու տեսք է գնում

Շաբաթ օրերը լոյս կիրակի, գիշերուայ 3 ժ., շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով. Նովորոսիյսկի Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սեաստապոլի և Եւպատորիայի, վրայով։

Երեքշաբթի օրերը՝ լոյս չորեքշաբթի, գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար շոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը՝ լոյս հինգշաբթի, գիշերուայ 4 ժամին, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օդեսսայից գալիս է Բաթում

Երկուշաբթի օրերը առաւօտեան՝ ուղիղ ընթացքով։

Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը, երեկոյեան շրջանառու ընթացքով։

Երկուշաբթի օրերը, գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար չոգենաւը՝ շրջանառու ընթացքով.

Գործակալութիւնը գտնւում է Թիֆ. Կալ. բանկի գալերէյում №№ 117—118

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ТРЕБУЮТСЯ АГЕНТЫ для продажи выигрышныхъ билетовъ съ разсрочкой платежа и страхованію
Прос. адрес. банкирской конторѣ
СПБ. И. А. ШИФЪ, Гороховая, 13.
(М.) 15—1.

Ի գիտութիւն հայ թարգմանիչների և հասարակութեան պատիւ ունիմ յայտնելու, որ արդէն ձեռնարկել եմ
ՍԱԿԻԱ-ՄՈՒՆԻ
հինաւուրց իմաստասէր (զրոյցների Բուդդայի մասին) գրքոյկի թարգմանութեան. հեղ. Շիւրէի։
ԱՐՇԱԿ ԵԴԻԳԱՐԵԱՆ
5—5

ԲԺՇԿԱՊԵՏ ԲԵՐԲԵՐԵԱՆԸ
Նախկին տարիների նման ամառուայ ընթացքում ընդունում է հիւանդներ
Էօրէնբուրգի հանդային ջրերում
(656) 3—3

Յունիսի սկզբին լոյս կըտեսնի
ԲԱԳՐԱՏ ԱՑՎԱՉԱՆՑԻ
I.
ՏԱՆՋԱՀԱՐԻ ԲՈՎԻՑ
վէպը, իսկ յետոյ
II.
ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ
պատմական վէպը։ Երկու գրքի բաժանորդագինն է մէկ րուբլի. լոյս տեսնելուց յետոյ գինը կըբարձրանայ։ Դիմել՝ Тифлисъ, Баграту Айвазянцу, Эчміадзинская улица №20 կամ Կեդրոնական գրավաճառանոց։
5—5.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ

տեղափոխուելու է իր ամարային ընակարանը կիրակի, մայիսի 28-ին։ Տեղափոխման օրը տեղի կունենայ ընդհանուր ճաշ։ Ճաշի սկիզբը ժամը 3-ին.

Մայիսի 31-ից սկսած ամեն շաբաթ և երեքշաբթի օրերը լինելու են սովորական ընտանեկան երեկոյթներ, իսկ շաբաթ օրերը նուագել երաժշտութիւն։

(349) 3—1

Ուրբաթ, մայիսի 26-ին Թիֆլիսի արքունական թատրոնում թատերասէրների տալու են մի ներկայացում յօգուտ Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան։

Տոմսակները կարելի է ստանալ ընկերութեան Կար ու Ձևի դրասրոցում (Գանովսկայա №25), իսկ ներկայացման օրը թատրոնի կասսայում։

(657) 3—3

BATEAUX a VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET Cie
ՆԱՒԱԴՆԱՑՈՒԹԻՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
„Ն. ՊԱՔԷ եւ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղիղ երթեւեկութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷՅԼ երկու շաբաթը մի անգամ։
Բաթումից Մարսէյլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Պոլիս քաղաքները։
Բաթումից դուրս է գալիս չորեքշաբթի, մայիսի 31-ին (յունիսի 12) «Արմենիա» շոգենաւը, նաւապետ՝ «Տիբալ»։
Բաթումից Պարիզ հաղորդակցութեան տոմսակները սովորական զիջումն ունին։
Ապրանք յանձնելու կամ ճանապարհորդութեան վերաբերեալ տեղեկութիւնները ստանալու համար դիմել
Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՑԻՆ, Նաբերեժնայա։
Թիֆլիսում—պ. ԲԱՐԵԿԵՆԴԱՆԵԱՆԻՆ, Սիօնի փողոց քարվանս. Դէսորդ պ.
Բագուում—պ. Սամուէլ Դիլղարեանին, Կոլիբելաչինսկայա հրապարակ։
Նովոռոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՌԵՆՈՑԻՆ։
(316) 20—17

ՍԱՐԿԱՒԱԳ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՃՈՒՂՈՒՐԵԱՆ
ՄՈՌԱՑՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ
Առաջին և երկրորդ գիրք
Առաջին գիրքը — 60 կ. երկրորդը — 50 կ., երկուսը միասին —1 ր.։ Ձանապարհածախքը վճարում է գնողը իւրաքանչիւր գրքին 7 կ.։ Դիմել՝ Тифлисъ, Николаевская, №10, архидіакону А. Джугурянъ. կամ Թիֆլիսի գրավաճառներին։

ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ՌՈՍՍԻԱ"
ԲԱՐՁՐԱԴՈՑՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ.
Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.
Հիմնական եւ պահեստի դրամագլուխն է 22,000,000 րուբլի
Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահւում են պետական բանկում։
Ընկերութիւնն ընդունում է՝
ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
Այսինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեպհական ծերութիւնը, լաւիկն աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին չափաւոր պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին։
1894 թուի յունուարի 1-ին «Ռոսսիա» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 28,246 անձինք 75,621,010 րուբլի դրամագլխով։
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԹՓԹՈՒՂ ԳԷՊՔԵՐԻՑ
Թէ առանձին անձինքների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւններ գործարաններում ծառայողների և բանւորների,— պահանջելով ապահովագրական վճարները՝ դիվիդէնդի վրայով։
ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ամեն տեսակ չարժական և անչարժ կալուածքների (չինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահկարասիքի և այլն)։
ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
գետային, ցամաքային և ծովային, ապահովագրութիւն նաւերի։
Ապահովագրութեան մասին յարաբերութիւնները ընդունւում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդւում են Վարչութիւնը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեպհական տուն № 37)։ Կովկասեան շրջանի համար՝ ընկերութեան վարչութեան մէջ՝
ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիևսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։
Ապահովագրական տոմսակները՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար գժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և չոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ արւում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և չոգենաւային նաւահանգիստներում։
(334) 50—24.

Тифлисъ Дозв. Цензурою 24-го Мая 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. О. А. Меликъ-Шахназаріанца Воронц. Набережн. Церковный домъ